

Հարգելի տնօրեն,

Միջազգային կրթության ամերիկյան խորհուրդների հայաստանյան գրասենյակը ԱՄՆ պետդեպարտամենտի կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում արդեն 26 տարի իրականացնում է Ապագա առաջնորդների փոխանակման (Future Leaders Exchange կամ FLEX) կրթաթոշակային ծրագիրը, որի հաղթողները՝ 9-12-րդ դասարանցիները, հնարավորություն են ստանում մեկ ուսումնական տարի անցկացնել ԱՄՆ-ում՝ ապրելով ամերիկյան ընտանիքներում և սովորելով ամերիկյան դպրոցներում:

2020-2021 ուսումնական տարվա համար նախընտրական քննությունները տեղի են ունենալու ս.թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին՝ Հայաստանի բոլոր մարզերում:


Կից Ձեզ ենք ներկայացնում քննությունների ժամանակացույցը, ինչպես նաև մասնակցելու պայմանները:


Ամերիկյան խորհուրդները ցանկանում է դիմել Ձեզ՝ աջակցելու FLEX ծրագրին և մրցույթի մասին տեղեկատվությունը տարածել Ձեր ղեկավարած դպրոցի անդերես լեզվի ուսուցիչների և հետաքրքրված աշակերտների միջև:

Քննությանը կարող են մասնակցել անսանձափակ թվով աշակերտներ, ովքեր համապատասխանում են կից նշված չափանիշներին: Նախապես գրանցվելու անհրաժեշտություն չկա:

Ծրագիրը խրախուսում է հաշմանդամություն ունեցող երեխաների մասնակցությունը մրցույթին:

Կանխավ շնորհակալ ենք համագործակցության համար:
Հարգանքով՝

ՖԼԵՔՍ ծրագրի ղեկավար
Հ. Մանուկյան 





ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՄ 1 ՈՒՄ. ՏԱՐԻ ԱՆՎՃԱՐ ՍՈՎՈՐԵՆԸ ԱՄՆ ԱՎԱԳ ԴԳՐՈՑՈՒՄ, ԱՊՐԵՆԸ ԱՄԵՐԻԿԱՆ ՀՅՈՒՐԸՆԿԱԼ ՐԱՏԱՆԻՔՈՒՄ: ԵԹԵ ԱՅՈՒՄ, ՄԱՍՆԱԿՑԻՐ ԱՄՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ FLEX-ԱՊԱԳԱ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՑԻՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ:

Ծրագրի 2020-2021 ուս. տարվա մրցույթի քննություններին կարող են դիմել 33 բոլոր քաղաքացիները, ովքեր

- ծնվել են 2002թ. փետրվարի 15-ից մինչև 2005թ.-ի հուլիսի 15-ը,
- սովորում են 9-12*-րդ դասարաններում կամ քոլեջների այն կուրսերում, որոնք համապատասխանում են դպրոցների 9-12 դասարաններին՝ 2019թ. սեպտեմբեր ամսվա դրությամբ,
- գիտեն անգլերեն,
- համապատասխանում են ԱՄՆ մուտքի արտոնագիր ստանալու պահանջներին,
- վերջին 5 տարվա ընթացքում չեն եղել ԱՄՆ-ում 90 օրվանից ավել:

*12-րդ դասարանում և քոլեջների ավարտական կուրսում սովորող աշակերտները, ովքեր ենթակա են պարտադիր զինվորական ծառայության, ծրագրին դիմել չեն կարող՝ անկախ տարիքից: Խրախուսվում է նաև հաշմանդամություն ունեցող աշակերտների մասնակցությունը ծրագրին:

Դիմորդները պետք է ներկայանան նախապես նշված քննական կետերուն՝ նշված օրն ու ժամին և իրենց հետ բերեն՝ ծննդյան վկայական կամ անձնագիր՝ բնօրինակ: 1 հատ 3x4 չափսի լուսանկար: գրիչ:

ՄՐՑՈՒՑԹԻ ԶԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԱՐՈՂ ԵՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԱՆՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԹՎՈՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ՝ ԱՌԱՅ ՆԱԽԱԴԵՍ ԳՐԱՆՑՎԵԼՈՒ

Լողու մարզում նախընտրական փուլերի քննություններն անց են կացվելու

Դեբեդի Հայաստանի մանուկներ հիմնադրամի (ՔՈԱՖ) ՄՄԱԲ կենտրոնում, 2019թ. սեպտեմբերի 20-ին, ժամը 11:00

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանում 2019թ. սեպտեմբերի 21-ին, ժամը 11:00 հասցե՝ Տիգրան Մեծի 36

Հարցերի դեպքում, կամ այլ մարզերում/երևանում քննության օրերը ճշտելու համար խնդրում ենք դիմել Միջազգային կրթության ամերիկյան խորհուրդների գրասենյակ:
www.americancouncils.am
 FB: American.Councils.Armenia
 e-mail-flex@americancouncils.am
 phone: (010) 56 00 45

Instagram-[flexprogramarmenia](https://www.instagram.com/flexprogramarmenia)